ԱՆՆԱ ՕՆԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻՀԻ ԾԱԾԿՈՑՆԵՐԸ

Մխիթարյան միաբանությունն անուրանալի դերակատարում ունի հայ մշակույթի պահպանման եւ հայագիտության զարգացման գործում։

1701 թ. սեպտեմբերի 8-ին՝ Աստվածածնի ծննդյան տոնին, Մխիթար Սեբաստացին իր համակիրների հետ Կ. Պոլսում հիմնում են Ս. Անտոն աբբայի միաբանությունը։ Թուրքական իշխանության հետապնդման պատճառով նա իր աշակերտների հետ գաղտնի հեռանում է Հունաստանի Մորեայի (Պելոպոնես) շրջանի Մեթոն բերդաքաղաք։ Հիմնադրման ժամանակ միաբանությունում կար 12 վանական, որոնցից 4-ը՝ վարդապետ։

1717 թ. Կղեմես ԺԱ. պապը հաստատում է միաբանության կանոնադրությունը եւ Մխիթար Սեբաստացուն շնորհում աբբահոր տիտղոս։ Սենատը նոր օրենք էր ընդունել, որով արգելվում էր քաղաքում որեւէ կրոնական նոր միաբանության կառուցումը։ Սենատը Մխիթար Սեբաստացուն առաջարկում է միաբանության համար քաղաքից դուրս մի վայր ընտրել։ Նա ընտրում է Ս. Ղազար կղզին, որը պատկանում էր Մենդիկանտի միաբանությանը։ 1717 թ. օգոստոսի 26-ին Սենատը Մխիթարյաններին, մշտական բնակության իրավունքով, շնորհում է Ս. Ղազար կղզին, որտեղ միաբանները հաստատվում են սեպտեմբերի 8-ին՝ միաբանության հիմնադրման տարեդարձի օրը։ Մխիթարյան միաբանությունը ծավալում է հայագիտական եւ մշակութային բեղուն գործունեություն. այն նաեւ դառնում է հոգեւոր կրթության կենտրոն[1]։ Այժմ միաբանությունն ունի եկեղեցի, մատենադարան, սեղանատուն, թանգարան, գրադարան եւ այլ օժանդակ շինություններ։

Մեր ուսումնասիրման նյութ հանդիսացող սկիհի ծածկոցներից պահպանվել են սակավ օրինակներ։ Պատճառը նաեւ 1882 եւ 1975 թվականների հրդեհներն էին։ 1882 թ. հրդեհի պատճառն այն ժամանակ չի լուսաբանվել, ուստի պարզ չէ, թե ինչ կորուստներ է կրել միաբանությունը։ 1975 թ. հրդեհը բռնկվել է ավանդատնից, եւ բազմաթիվ

[1] *Տե՛ս* Vahe Oshagan, From Enlightenment to Renessance: The Armenian Experience, Enlightenment and diaspora: The Armenian and Jewish Cases, edt. R. Hovhannisian and D. Myers, Atlanta, Georgia, 1999, *էջ 153։*

մասունքներ այրվել կամ կիսայրվել էին։ Պատշաճ տեսք չունենալու պատճառով շատ օրինակներ չեն ցուցադրվում։ Վնասվել են նաեւ սկիհի ծածկոցները։

1. Պահպանված վաղագույն օրինակներից մեկը 1766 թ. ծածկոցն է. ցուցադրված է թանգարանում։ Մոտ 98x98 սմ է, մետաքսե կարմիր կտորի վրա շղթայակար ասեղնագործություն է։ Կենտրոնում Աստծու Գառն է՝ ձեռքին դրոշ, շուրջը ճաճանչազարդ շրջանակն է։ Ծածկոցի կենտրոնական հատվածում՝ չորս կողմով, ասեղնագործված է. «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ Է Ծ[Ա]ԾԿՈՅՍ ՓՈՒԱՐ[Ե]ՅԻ[2] ՕՎՆԱՆ[ԻՆ] ԵԻ ԿՈՂԱԿՑ[Ի]Ն Մ[Ա]ՐԳ[Ա]Ր[Ի] ՏԻՆ, ՈՐԴՈՅՆ ՄԿՐՏՉ[Ի]Ն, ԹԷՎԱՆԻՆ ԵԻ ԾՆՈՂԱՑՆ ԱՆՈՆՑ ԵԻ ՄԱՐԻԱՄԻՆ ԵԻ ՀԱՄԱՅՆ ՆՆՋԵՑԵԼՈՅՆ Ի Դ[ՈՒ]ՌՆ ՔԻԼՈՒ[3] Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԱ ԹՎԻՆ ՌՄԺԵ. ԻՆ»։

Արձանագրության չորս անկյունում հրեշտակներ են ասեղնագործված, հաջորդ շարքի անկյուններում՝ չորս քերովբեներ, իսկ կենտրոնում՝ սերովբեներ։ Ամբողջ մակերեսին աստղիկներ են ասեղնագործված։ Եզրագոտին ծաղկաշղթա է։

Միաժամանակ օգտագործված են մի քանի տեսակի թելեր։ Արձանագրությունը, ծաղկաթերթերը, հրեշտակների մազերը եւ Գառան լուսապսակն ասեղնագործված են դեղին մետաքսաթելով, ծաղկաթերթերի միջուկը, դրոշակի մի մասը՝ կանաչ մետաքսաթելով, ծաղկաթերթերի եզրերը, բոլոր հրեշտակների դեմքերը եւ դրոշակի մյուս հատվածը՝ սպիտակ մետաքսաթելով։ Մնացյալ մանրամասները՝ ծաղկաշղթայի տերեւները, հրեշտակների թեւերը, դեմքերի մասերը եւ լուսապսակները, Աստծու Գառան պատկերը ասեղնագործված են մետաղական թելով։ Շղթայակար ասեղնագործությունն արված է վարպետորեն եւ համաչափ, իսկ թելերի գունային նուրբ անցումները չեն ընդգծում որեւէ պատկեր.

---

[2] Փոարեցի՝ հավանաբար բովարեցի. Բովեր՝ ՀՀ Լոռու մարզի Շնող գյուղից 4 կմ հարավ գտնվող վանք։ Կա նաեւ Բովիկ՝ գյուղ Արեւմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրում գավառում՝ Մամախաթուն քաղաքից 26 կմ հարավ. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմ.՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հտ. Ա., Երեւան, 1986, էջ 732։ Մենք առավել հակված ենք երկրորդ տարբերակին։

[3] Քիլու՝ հավանաբար Քիլուա գյուղը. անվանումը գրված է սեռական հոլովով։ Քիլուա՝ գյուղ Արեւմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Էրզրում գավառի Խնուս գավառակում. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. Ե., Երեւան, 2001, էջ 372։ Տվյալ դեպքում տրամաբանական է նախորդ ծանոթագրության տեղանունը համարել Բովիկ գյուղը, քանի որ երկու բնակավայրերը նույն նահանգի համանուն գավառակում էին՝ իրարից ոչ հեռու։ Հնարավոր տարբերակ է նաեւ «քիլու» բառը թարգմանենք «եկեղեցի» (թուրք.՝ kilis – *եկեղեցի)։*

ամենացայտունը, թերեւս, կարմիր կտորն է, որի խորհրդի մասին կխոսենք ստորեւ։

2. Հաջորդ ծածկոցը կարմիր մետաքսի վրա մետաքսաթելով ասեղնագործություն է. ցուցադրված է թանգարանում։ Մոտ 90x90 սմ է։ Կարծում ենք, որ ծածկոցը ենթարկվել է վերականգնման՝ տեսանելի են երկու գույնի թելեր իրար վրա։

Ծածկոցի կենտրոնում՝ շեղանկյուն շրջանակի մեջ, ասեղնագործված է Աստծու Գառը՝ դրոշով։ Շրջանակի վերին երկու կողմում ասեղնագործված է երկու հրեշտակ՝ ամբողջ մարմնով, իսկ ստորին երկու կողմում՝ թեւերով եւ գլխով հրեշտակներ։ Շուրջը ծաղկի նմանվող չորս պատկեր եւ չորս հրեշտակ են։ Շրջանակից՝ չորս առանցքից դուրս են գալիս գծեր, որոնք ավարտվում են կիսաշրջաններով։ Վերին կիսաշրջանում աղավնակերպ Սուրբ Հոգին է ասեղնագործված, ստորինում՝ պատվանդանով խաչ։ Աջ եւ ձախ կիսաշրջաններում հրեշտակներ են ասեղնագործված։

Խաչի երկու կողմում ասեղնագործված է՝ «ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ՆԸԼՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ ԿՈՂ[ԱԿ]ԻՑՈՒՆ ԿՈՒՎԱՐԴԻՆ, ՅՈՎԱՆԷՍ, ՄԵԼՔՈՆԻՆ, ՄԱՐԵԱՄԻՆ, ԳՐԻԳՈՐԻՆ, ԳՈՒԼՕԿԱՆ Ե ԿԵՆԴԱՆԵԱՑ ԳԱՍՊԱՐԻՆ, ՀԱՎԱՍՍ[ՈՒ]Ն ՀԱՒԱՍԱՐ ՆԸՆՋԵՑ[ԵԼ]ՈՑ»։

Շուրջը 15 սմ լայնությամբ բուսական եզրագոտի է։ Գառան մարմինը զիգզագաձեւ լիցք է, իսկ մնացյալ պատկերները սովորական հարթակար ասեղնագործություն են։

3. Սկիհի ծածկոց դեղնավուն ատլասից՝ մոտ 80x80 սմ. ցուցադրված է թանգարանում։ Ի տարբերություն նախորդների՝ արձանագրություն չունի եւ պատկերներն էլ բացարձակ տարբերվում են։ Կենտրոնում՝ բարձր պատվանդան ունեցող սկիհի մեջ, մանուկ Քրիստոս է ասեղնագործված։ Նրա երկու ձեռքն էլ օրհնող շարժումով են՝ ցուցամատն ու միջնամատը վերեւ։ Քրիստոսի մեջքի ետեւում ճաճանչավոր շրջանակն է։ Քրիստոս շրջապատված է հրեշտակներով։ Սկիհի պատվանդանը պահում են ամբողջ մարմնով պատկերված հրեշտակները։ Երեւում է հրեշտակների մի ոտքը, ձեռքերը սկիհի ոտնակին են, թեւերը՝ տարածված, հագուստները ձգվում է մինչեւ գետին, իսկ գոտիները ծածանվում են։ Հաջորդ երկու հրեշտակը Քրիստոսի ձեռքերի ուղղությամբ են՝ ձեռքներին բուվառներ։ Վերեւում եւս չորս հրեշտակ են՝ մերկ եւ անդեմ։ Վերեւից իջնում է աղավնակերպ Սուրբ Հոգին, որի կտուցից ճառագայթներ են

տարածվում։ Հրեշտակների պատկերների երկու կողմում պատվանդանով մեծ մոմեր են, իսկ դրանց վերեւում ու ներքեւում՝ չորս ծաղկեփունջ։

Եզրագոտին ծաղկաշղթա է, իսկ անկյուններում սերովբեներ են։

Ընդհանուր ասեղնագործության մեջ օգտագործված են մոխրագույն, օխրայագույն, սեւ մետաքսաթել, եւ միայն ծաղիկներն են բազմագույն՝ դեղին, ալ կարմիր, կապույտի ու կանաչի երանգներ, վարդագույն։ Ամբողջը շղթայակար ասեղնագործություն է։

4. Սկիհի ծածկոց՝ մոտ 120x120 սմ, 1789 թ., ցուցադրված է Մխիթար աբբահոր սենյակում. փոքրիկ վնասվածք ունի, որը միացվել է ասեղնագործ ժանյակով։

Կտորը դեղնավուն բամբակ է, ասեղնագործությունը գունաթափված է, տեղ-տեղ վնասված։ Ծածկոցն ասեղնագործված է ոսկեթելով եւ մետաքսաթելով։ Կենտրոնում՝ ճաճանչավոր շրջանակի մեջ, Աստծու Գառն է։ Շրջանակը ցանցկեն լիցքի եղանակով է, երբ ոսկեթելով ուղղահայաց գծեր են կարվում, եւ աշխատող մետաղական թելը անցնում է ոսկեթելի տակով, ապա վրայով՝ այդպիսով ստեղծելով ցանցկենություն։ Սովորաբար այս եղանակով ասեղնագործելիս հիմնակտորը կտրում են. այս դեպքում ցանցկեն ասեղնագործությունը կտորի վրա է։ Գառան մարմինը եւս մետաղական թելով է ասեղնագործված, իսկ դեմքի մանրամասները, վերջույթների ստորին մասերը եւ մարմնի եզրագծերը՝ դեղնավուն մետաքսաթելով։

Ճաճանչներից դուրս պատկերված են հրեշտակներ։ Ողջ մակերեսին ասեղնագործված են ծաղիկներ, ապա՝ քառանկյուն դասավորված ութ հավասարաթեւ խաչեր։ Հաջորդ շարքում՝ անկյուններում, սերովբեների, իսկ առանցքային մասերում քերովբեների պատկերներ են։ Եզրային հատվածում ասեղնագործված է՝ «Յ[Ի]Շ[Ա]Տ[Ա]Կ է ՍԿԻՀ՝ ԾԱԾԿՈՑ ԽԱՅՍԷՆԻ[4] Ս[ՈՒՐ]Բ

---

[4] *Տարբեր ժամանակաշրջաններում Խայսեն, Խայսեր, Կայսերի, Կեսարիա անվամբ գյուղեր եւ նահանգներ են եղել պատմական Հայաստանում։ Տվյալ արձանագրության մեջ հանդիպող բարբառային Խայսեր անվանումը վերագրում ենք պատմական Փոքր Հայքի տարածքում Կեսարիայի նահանգի համանուն գավառի կենտրոնին (այժմ՝ Թուրքիայի տարածքում Կայսերի անունով քաղաքը)։ Բնակավայրը հիմնադրվել է ԺԱ. դարում, հետո դարձել սելջուկների հենակետը, ապա անցել է օսմանյան տիրապետության տակ։ Հայերն այստեղ զբաղվել են գորգագործությամբ, ոսկերչությամբ, կաշեգործությամբ, կտավագործությամբ։ 1856–1857 թթ. Գաթրճյան եղբայրները Կեսարիայում կառուցել են առաջին եւ ամենամեծ տեքստիլ գործարանը, որն ուներ 300 դազգահ, եւ այստեղ 3000 բանվոր-ծառայողներ էին աշխատում։ Կեսարիայում կային երեք խոշոր եկեղեցի՝ Ս. Աստվածածին, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Սարգիս։ Հավանաբար արձանագրության մեջ հիշատակվող Ս. Սարգիսը հենց այս եկեղեցին է. տես «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. Գ., Երեւան, 1991, էջ 96–98։*

ՍԱՐՔԻՍԻ ՎԱՆՔ[Ի]Ն ԸՍՏՄՊՕԼ[5] ՎԱԼԻՏԷ ԽԱՆԸ ԽԱՅՍԷՐՅԻ ՊԱՊՈՒՋՃԻՆԷՐՈՒՆ[6] Ի ՎԱԵԷԼՈՒՄՆ Ս[ՈՒՐ]Բ ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔԸՆ ԹՎ[Ի]Ն ՀԱՅՈՑ ՌՄԼԸ. ԻՆ»։

Չորս կողմով ձգվող եզրագոտին բաղկացած է եռանկյուններից եւ խաչերից։

5. Սկիհի ծածկոց՝ մոտ 90x90 սմ. ցուցադրված է Մխիթար աբբահոր սենյակում։ Կտորով, ասեղնագործության եղանակով բավական նման է նախորդ նմուշին։ Կենտրոնական հատվածում՝ ճաճանչավոր շրջանակի մեջ, ասեղնագործված է Աստծու Գառը։ Ճաճանչներից դուրս ասեղնագործված են չորս աստղիկ, ամեն կողմում՝ պատվի նշանով մեկ բառ՝ «Տ[Է]Ր, Ա[ՍՏՈՒԱ]Ծ, Յ[ԻՍՈՒ]Ս, Ք[ՐԻՍՏՈ]Ս»։

Ապա չորս կողմով ձգվող արձանագրությունն է, որը ուղանիստ է կազմում՝ «Յ[Ի]Շ[ԱՏԱ]Կ Է Ի ՍԿԻ[ՀԻ]Ն ԾԱԾԿՈՅՍ ԽԱՐՄԱՆ ՕՂԼՈՒ[7] ՆԻԿՈՂՈՍԻ ՈՐԴԻ ՅԱԿՈԲԻՆ, ԾՆՈՂԱՅՆ ՄԱՐԻՆՕՍԻՆ, ՊԵՏՐՈՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿԻՑ ՋՈՒՄՐՈՒԹԻՆ ԵՒ ՈՐԴ[ԻՈ]ՅՆ Ի ԿԵՍԱՐՈՒ Ս[ՈՒՐ]Բ ՍԱՐԳԻՍ[8] ԵԿ[ԵՂԵ]Ց[ԻՈՅՆ]»։

Արձանագրությունից դուրս՝ առանցքային մասում, չորս հավասարաթեւ, ծաղկած խաչեր են, իսկ անկյունային մասում՝ չորս փոքր, ապա՝ չորս մեծ սերովբեներ։

Սերովբեների թեւերը ցանցկեն են, իսկ մնացյալ մանրամասները դեղին մետաքսաթելով եւ լիցքի եղանակով են ասեղնագործված։ Եզրագոտին բուսական պարզ ծաղկաշթա է։ Այս ծածկոցը նման է նախորդին եւ՛ կտորով, եւ՛ ասեղնագործության եղանակով։ Ոճական նմանությունից զատ, արձանագրություններում առկա միեւնույն բնակավայրի ու եկեղեցու անունները հաստատում են մեր կարծիքը, որ այդ ծածկոցները նվիրաբերվել են նույն եկեղեցուն, համաժամանակյա են։ Քերովբեների եւ

---

[5] *Բառն անհասկանալի է, գուցե նկատի ունի Ստամբուլը։*

[6] *Պապուճ՝ հողաթափ. տե՛ս «Հայոց լեզի բարբառային բառարան», Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ, Երեւան, 2008, էջ 29։ Բառն այժմ էլ տարածված է հայերի կենցաղում. ինչպես արդեն նշեցինք՝ Կեսարիայում զարգացած էին արհեստները, հատկապես՝ գորգագործությունն ու կտավագործությունը։ Վերոնշյալը, հավանաբար, հողաթափերի արտադրությամբ զբաղվող կամ հողաթափ գործող գերդաստան էր։*

[7] *Խարմանօղլը՝ հավանաբար Կարսի մարզի Կարս քաղաքից 11 կմ հարավ՝ Կարս գետի աջ ափին գտնվող գյուղը. տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հտ. Բ., Երեւան, 1988, էջ 708։*

[8] *Խոսքը, ինչպես նախորդ ծածկոցի արձանագրության դեպքում, Կեսարիայի Ս. Սարգիս եկեղեցու մասին։ Այն հիմնադրվել է ԺԶ. դարից առաջ, վերակառուցվել է 1834 թ.՝ Սարգիս Աղա Գյումշյանի հովանավորությամբ. տե՛ս* Bedross Der Matossian, Ottoman Armenian Kesaria/ Kayseri in The Nineteenth Century, Armenian Kesaria/ Kayseri and Cappadocia, California, 2013, *էջ 196։*

հրեշտակների պատկերների տարբերությունից ենթադրում ենք, որ վարպետ-ասեղնագործողը գուցե նույն մարդը չէ։

Վերոնշյալ սկիհի ծածկոցները թանգարանային նմուշներ են։ Այժմ կիրառվող նմուշները եւ դրանց օգտագործման ձեւը էապես տարբերվում են։ Ներկայումս կիրառվող ոչ բոլոր ծածկոցներն են ասեղնագործ. առկա են մեքենակար, յուղաներկով նկարված ծածկոցներ, Մարաշի հյուսված կարով ասեղնագործված օրինակներ։ Մարաշի ասեղնագործությունը որքան էլ հին էր ու տարածված, սակայն այն հարդարում էր միայն կենցաղային իրեր եւ հագուստ, բնորոշ չէր եկեղեցական ծածկոցներին, վարագույրներին։ Նոր նմուշների մեջ կան ոսկեթելին նմանվող ոսկեգույն մետաղական թելով ասեղնագործված, փուլերով հարդարված ծածկոցներ, որոնք նման են հին նմուշներին։ Ծածկոցների ընտրության վերաբերյալ պարզեցինք որոշ հետաքրքիր փաստեր[9]։ Նախ՝ պատարագների ընթացքում օգտագործվող ծածկոցներն ընտրվում են ոչ թե ըստ պատկերագրական առանձնահատկության, այլ՝ ըստ կտորի գույնի։ Օրինակ՝ սպիտակ *ծածկոցներ կիրառվում են Ս. Հարության տոնին մատուցվող Պատարագի ժամանակ։ Նոր կիրակի կոչվող տոնին մատուցվող Ս. Պատարագի ընթացքում եւս օգտագործվում են սպիտակ ծածկոցներ։ Նոր կիրակին Զատկին հաջորդող կիրակին է, նաեւ կոչվում է Կրկնազատիկ։ Այն եւ Զատկի, եւ Եկեղեցու ընդարձակման ու տարածման հիշատակի տոնն է[10]։*

Կանաչ *ծածկոցներ կիրառվում են Ծաղկազարդի եւ Կանաչ կիրակիի ժամերգությանը։ Ծաղկազարդը նշվում է Զատկից մեկ շաբաթ առաջ. այն Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի հիշատակության տոնն է[11]։ Կանաչ ծածկոցներ կիրառվում են նաեւ Աշխարհամատրան[12] կամ Կանաչ կիրակիի Ս. Պատարագին։*

Ս. Խաչի, մարտիրոսների եւ նահատակների հետ կապված բոլոր տոներին մատուցվող պատարագներին կիրառվում են կարմիր *ծածկոցներ։*

Կապույտ *ծածկոցների կիրառումը բնորոշ է Աստվածամոր տոներին. օրինակ՝ Ս. Աստվածածնի վերափոխման տոնին[13]։*

---

[9] *Մեզ մեծապես օգնեց Մխիթարյան միաբանության անդամ Հայր Համազասպ Քեշիշյանը, ում շնորհիվ կարողացանք տեսնել սկիհի ծածկոցների պահպանված հին նմուշները եւ տեղեկություններ ստանալ դրանց կիրառության վերաբերյալ։*

[10] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Միսական բառարան, Անթիլիաս, 1979, էջ 55։*

[11] *Տե՛ս անդ, էջ 196։*

[12] *Աշխարհամատրան կիրակին Ս. Հարության տոնին հաջորդող երկրորդ կիրակին է. տե՛ս անդ, էջ 12–13։*

[13] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Միսական բառարան, էջ 63։*

Այսպիսով, Մխիթարյան միաբանությունը պահպանել է հայկական մշակույթի, արվեստի բազմադարյա ավանդույթները: Հայտնի չէ, թե ինչպես եւ ում շնորհիվ են ձեռք բերվել առկա սակավաթիվ ծածկոցները: Մխիթարյան միաբանությունում, ինչպես նաեւ հայկական թանգարաններում պահվող սկիհի ծածկոցներն ասեղնագործված եւ արձանագիր են: Ասեղնագործված հին նմուշներում կիրառված են շղթայակար, հարթակար, ցանցկեն կար, ոսկեթել, մետաքսաթել: Արձանագրությունները նվիրատվական բնույթի են. հիշատակված են մարդկանց անուններ, տեղանուններ, եկեղեցիների անուններ: Պատկերները հիմնականում նույնն են՝ սերովբեներ, քերովբեներ, հրեշտակներ, Աստծու Գառ, ճաճանչավոր շրջանակ եւ այլն: Սկիհի ժամանակակից ծածկոցների հարդարանքը եւ կարատեսակներն էապես փոխվել են: Այժմ օգտագործվում են մեքենակար նմուշներ, շարունակվում է ավանդական կարատեսակների ու եղանակների կիրառումը՝ շղթայակար ասեղնագործություն, փուլեր, ասեղնագործ ժանյակ: Այս ամենին ավելացվել է նախկինում եկեղեցական ծածկոցներին ոչ բնորոշ կարատեսակներ՝ Մարաշի ասեղնագործություն եւ ապակյա ուլունքների կիրառություն: Ինչպես նախկինում, այնպես եւ այսօր, տոնական պատարագների ժամանակ կիրառվում են առավել ճոխ ծածկոցներ:

РЕЗЮМЕ

Венеция, будучи одним из важнейших центров армянской культуры, продолжает развивать многовековые традиции армянского церковного искусства. Нам неизвестно, как сохранились исследуемые нами старые покровы. Армянские покровы, хранящиеся в Венецианской конгрегации, как и другие армянские покровы, вышиты и имеют надписи. В вышитых старых образцах использованы разные техники: тамбурный шов, вышивка гладью, ажурный шов, золотистые и шелковые нити. В надписях упоминаются имена людей, церквей, городов. Изображения в основном повторяются — серафимы, херувимы, ангелы, Агнец Божий и так далее. Современные покровы существенно изменились. Используются вышитые машинкой экземпляры, продолжаются традиционные техники, материалы и вышивка: тамбурный шов, кружево иглой, блестки. Ко всему этому добавлены ранее не характерно для церковного

вышивания методы и техники – вышивка мараша или применение стеклянных бусин. Как раньше, так и сейчас во время праздничных Литургий применяются более изысканные покровы, которые сделаны из того же материала, что и одежда священника — фелонь.

SUMMARY

Venice, being one of the most important centers of the Armenian culture, continues to develop the centuries—old traditions of the Armenian Church art. We do not know how the old chalice veils studied by us have been preserved. The Armenian chalice veils kept in the Mekhitarist Congregation of Venice, as well as in other Armenian museums are embroidered and have inscriptions. Different techniques were used in embroidered old patterns—chain stitch, satin stitch, needle lace, golden and silk threads. The inscriptions mention the names of people, churches, cities. The images are basically repeated—seraphim, cherubim, angels, the Lamb of God, and so on. Modern chalice veils have changed significantly in design. There are machine-embroidered and hand-embroidered examples, in which traditional embroidery techniques continue to be used: chain stitch embroidery, needle lace, embroidery with spangles and applications.

To all this, methods and techniques, not previously characteristic of the Armenian Church embroidery, have been added—Marash embroidery or applications. Both in ancient times and now, during Divine Liturgies at Church feasts, more exquisite veils have been used, which are made of the same material as the priest's chasuble.